ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Ա. Գ. ՔԱԼԱԾՅԱՆ
փիլիսոփայական գիտ. թեկնածու

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԷԿՈՒՄԵՆԻԶՄԻ ԵՒ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արդի մարտահրավերների համատեքստում մ ավանդական եկեղեցիների էկումենիկ հարաբերությունների ծավալումը ենթադրում է համապատասխան հայեցակարգային ըմբռնումների համակարգում եւ մեկնաբանություն: Այդ տեսանկյունից արդիական մեծ արժեք են ներկայացնում Գարեգին Բ. Կաթողիկոսի ասփվածաբանական ըմբռնումները:

Իր ասփվածաբանական տեսլականին համահունչ՝ Ամենայն Հայոց Հայրապետը վերահաստատում է էկումենիզմի վերաբերյալ Հայ Եկեղեցու դիրքորոշումը՝ որպես հոգեւոր իրողություն եւ քրիստոնեական համագործակցության այնպիսի գործնական դրսեւորում, որի առանցքը համարվում է **եկեղեցու ծառայական միությունը**: «Հայ Եկեղեցին միշտ ցանկացել ու ձգտել է եղբայրական հարաբերություններ պահպանել բոլոր Եկեղեցիների հետ: Այսօր Մենք կրկնում ենք Եկեղեցու հայրերից Օգոստինոս Երանելու խոսքը, որը ԺԱ. դարում իբրեւ Հայ Եկեղեցու դիրքորոշում հաստատել է Հայոց Կաթողիկոս Ս. Ներսես Շնորհալին՝ արտահայտելով էկումենիզմի ոգու նկատմամբ ունեցած մեր ավանդական մոտեցումը, եւ որով շարունակում է առաջնորդվել Հայ Եկեղեցին. «Միութիւն ի կարեւորս, ազատութիւն յերկրայականս, սէր յամենայնի»[1]: Նա միաժամանակ հավաստում է, որ էկումենիկ եւ միջեկեղեցական հարաբերությունների ոգին Հայ եկեղեցու անփոփոխ ուղեկիցն է եղել դարեր շարունակ, ինչը հավաստվում է անուրանալի այն իրողությամբ, որ «Հայ Եկեղեցին ինքնուրույն պատմական զարգացմամբ հանդերձ երբեք չի կղզիացել, այլ միշտ առաջնորդվելով «միութիւն ի կարեւորս, ազատութիւն ի երկրայականս եւ սէր յամենայնի» գաղափարականով, իրեն համարել է Քրիստոսի Տիեզերական Եկեղեցու մեկ փոքրիկ, սակայն կարեւոր մասնիկը»[2]: Իսկ դրանից հետեւում է, որ Հայոց հոգեւոր առաջնորդը «էկումենիկ միության» եւ «միջեկեղեցական գործակցության» ծավալման հիմք է համարում նաեւ դավանանքի ու եկեղեցական ավանդության անսասանության ըմբռնումը:

1 «Էջմիածին», 2004, Զ., էջ 6:
2 «Էջմիածին», 2000, ԺԱ., էջ 8:

Անդրադառնալով վերջինիս պարզաբանմանը՝ Վեհափառը մատնանշում է, որ ամեն մի եկեղեցու ներքին կյանքն աչքի է ընկնում դավանական, ծիսական եւ հոգեւոր կյանքը բնութագրող տարբերություններով, սակայն վստահ է նաեւ, որ այդ ամենը մատնանշում է միայն «Եկեղեցի» երեւույթի դրսեւորման բազմազանությունը: Ինչ վերաբերում է ներքին՝ էական առանձնահատկությանը, ապա այդ համատեքստում «քանակական առանձնահատկությունները» դառնում են միանգամայն հարաբերական, եւ բնութագրական ու հիմնարար նշանակություն է ստանում այդ բազմազանության էությունը բնութագրող այն «անփոփոխն ու հաստատունը», որն իրենով պայմանավորում է «Եկեղեցի» երեւույթի յուրաքանչյուր դրսեւորման բովանդակությունը: Ահա թե ինչու Գարեգին Բ. Կաթողիկոսը, «էկումենիկ միության» եւ «միջեկեղեցական գործակցության» հիմք եւ ելակետ համարելով Քրիստոսին, պնդում է, որ վերը նշված բոլոր տարբերություններով հանդերձ «**մենք մեկ ենք, նույն ենք, կապված ու շաղախված ենք միմյանց հետ Քրիստոսով**: Ընդհանուրը մեր մեջ նորածին Մանուկն է, Հիսուս Քրիստոսն է, մեր Փրկիչը, որի առջեւ բոլորս, իբրեւ Եկեղեցու ներկայացուցիչներ, ունենք մեկ պատասխանատվություն»[3]:

Ի հակադրություն էկումենիզմի մոդեռնիստական եւ հետմոդեռնիստական ծայրահեղ ու միակողմանի ըմբռնումների եւ ի տարբերություն պահպանողական «մասնավոր» մոտեցումների՝ Գարեգին Բ. Հայրապետի հայեցակարգում մերժվում է էկումենիզմը որպես «գլոբալ եկեղեցի» որակելու թյուր մեկնաբանությունը: Այդ կապակցությամբ նա հավաստում է, որ ավանդական բոլոր եկեղեցիներն էլ էկումենիզմի նկատմամբ զգուշավոր վերաբերմունք ունեն, քանի որ արմատապես մերժել եւ մերժում են սեփական հավատքային ամբողջականությանը եւ սրբագործված ավանդությանը հակադրվող **ծայրահեղ ազատական** ցանկացած ըմբռնում: Մերժելով էկումենիզմի եւ միջեկեղեցական հարաբերությունների ծայրահեղ այդ ըմբռնումը՝ Վեհափառն առաջադրում է այն մոտեցումը, համաձայն որի **էկումենիզմը բնութագրվում է որպես «ինքնությամբ եւ եզակիությամբ» օժտված եկեղեցիների «երկխոսություն»**: «Հայ Եկեղեցու նշանավոր Հայրապետներից Մկրտիչ Ա. Խրիմյանը Քրիստոսի Մեկ եւ Տիեզերական Եկեղեցին պատկերավոր կերպով համեմատել է ծաղկեփնջի հետ, - հիմնավորելով էկումենիզմի աստվածաբանական իր ըմբռնումը՝ գրում է վերլուծաբանը, - ուր ամեն մի ծաղիկ ունի իր ուրույն գույնը, իր ուրույն երանգը եւ իր ուրույն բույրը՝ Քրիստոսի սիրո կապով մեկտեղված»[4]: Եւ քննարկվող համատեքստում Եկեղեցու մեկության եւ բազմազանության այս ընդհանրացնող ու ավարտուն բանաձեւման դիրքերից անդրադառնալով «Ես»-ի ու «Մենք»-ի հավասարակշռված ու հիմնավորված փոխհարաբերության մեկնաբանությանը՝ հավելում է նաեւ, որ էկումենիկ եւ միջեկեղեցական հարաբերությունների ծավալման «... այս առաքելության մեջ մենք նույնպես ունենք մեր կարեւոր մասն ու բաժինը, մեր ներդրումը՝ որպես քրիստոնեական Եկեղեցի, որպես սպասավորներ Քրիստոսի»[5]:

3 «Էջմիածին», 2000, Ա., էջ 57:

4 **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հատընտիր պաշտոնականք (1999-2009 թթ.), Ս. Էջմիածին, 2010, էջ 433:

5 «Էջմիածին», 2000, Ա., էջ 57:

Էկումենիկ հարաբերությունների եւ միջեկեղեցական համագործակցության ոլորտում մեծապես կարեւորելով **ինքնության** եւ **այլության** փոխհարաբերության դերը՝ Գարեգին Բ. Վեհափառը ապրվածաբանական այդ ըմբռնման դիրքերից անդրադառնում է նաեւ էկումենիզմի դերի գնահատմանը: Հիմնահարցի վերլուծությունը Հայոց Հայրապետին բերում է այն հետեւության, որ էկումենիզմի ճշմարիտ ոգու արտահայտություններից եւ հիմնարար տարրերից մեկը «Եկեղեցու հավաքական ուժը, բարոյական հսկայական հեղինակությունը եւ ցանկացած խոչընդոտ հաղթահարելու նրա ներունակությունն» է, ինչը Վեհափառի համոզմամբ՝ նոր ու խոստումնալից հեռանկար է բացում եկեղեցիների առջեւ «որպեսզի մենք՝ իբրեւ Եկեղեցիներ, **մեր ընդհանրությունների շեշտադրման ճանապարհով ընդառաջ ելնենք ժամանակի մարտահրավերներին**»[6]: Ուշադրության կենտրոնում պահելով էկումենիկ հիմնահնդիրների հավասարակշռված մեկնաբանությունը՝ հետեւողական մոտեցմամբ վերլուծաբանը հիմնավորում է ապրվածաբանական այն տեսակետը, որ եկեղեցիների **միությունը** արմատապես հակադիր է **եկեղեցիների միաձուլության** անհեթեթ ըմբռնմանն այն պարզ պատճառով, որ **քրիստոնեական ընդհանրական հավատքի նրբերանգային տարբերությունները կայացած իրողություն են**: Այդ դիրքերից էլ նա հռչակում է էկումենիզմը բնութագրող կարեւորագույն այն հիմնադրույթը, որ «**Սիրո եւ փոխգործակցության պատրաստակամությունն է էկումենիզմի ճշմարիտ ոգին, որով զորանում է Քրիստոսի Եկեղեցու հավաքական ուժը եւ բարոյական հեղինակությունը, որով ավելի զորավոր ու պտղաբեր պիտի լինի նաեւ քրիստոնեական Եկեղեցիների մեկ առաքելությունը**: Մենք հավատում ենք, որ քրիստոնեական Եկեղեցիների սերտացող հարաբերությունները նոր հեռանկար ու հնարավորություններ են բացելու միասնաբար գործելու՝ հանուն ամենուր խաղաղության հաստատման, հանուն ավելի մի լավ աշխարհի կառուցման»[7]: Միաժամանակ էկումենիկ եւ միջեկեղեցական երկխոսությունները կարեւորելով նաեւ այն տեսանկյունից, որ « **Քույր եկեղեցիների համագործակցությունը մեր ժամանակների հրամայականն է**»[8], Գարեգին Բ. Վեհափառը պարզաբանում է նաեւ, որ այդ համագործակցությունը խորքում ունի քրիստոնեական գործակցության գաղափարը, որի պատճառով ամեն մի էկումենիկ եւ միջեկեղեցական հարաբերություն ամենից առաջ «նշանակում է փոխադարձ սեր, վստահություն եւ եղբայրական համագործակցություն»[9]:

---

6 **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հատընտիր պաշտոնականք, էջ 431(ընդգծումը՝Ա. Ք.): Մեկ այլ առիթով Վեհափառը հավատում է նաեւ. «Մենք հավատում ենք քույր մեր Եկեղեցիները միմյանց կապող եղբայրական սիրո զորությանը, եւ այսօր եկել ենք միասնաբար աղոթելու, որ արարչագործ, երկնապարգեւ սերը ընդգրկի մեր հավատքի ժայռի վրա հիմնված բոլոր Եկեղեցիները եւ շաղախը դառնա նրանց միության: Մենք հավատում ենք, որ Ձեր Եկեղեցու հիմնադիր Ավետարանիչ Սուրբը եւ մեր Եկեղեցու հիմնադիր Սրբազան երկու Առաքյալները բարեխոս են առ Աստված, որ Տերը պահպանի եւ անսայթաք պահի քրիստոնեական բոլոր Եկեղեցիներն իրենց առաքելականության մեջ: Աղոթում ենք նաեւ, որ Ավետարանի լույսը շարունակի տարածվել աշխարհում, եւ իրականանա Սուրբ Մարկոսի արձանագրած Քրիստոսի խոսքը. «Բայց նախ պարտ է Աւետարանս քարոզել», «Էջմիածին», 2000, Ժ., էջ 6:

7 «Էջմիածին», 2004, Զ., էջ 9 (ընդգծումը՝Ա. Ք.) :

8 «Էջմիածին», 2000, ԺԱ., էջ 6 (ընդգծումը՝Ա. Ք.) :

9 «Էջմիածին», 2000, ԺԱ., էջ 6: Այս տեսանկյունից էկումենիկ սիրո ու հարգանքի խոսուն վկայության է

Վեհափառ Հայրապետի համար «լինել մեկ եկեղեցի» նշանակում է «Քրիստոսի սիրո մեջ լինել համախումբ եւ համախորհուրդ»՝ «որպես անդամներ Քրիստոսի մեկ եւ նույն մարմնի»[10]: Այդ ամենի հիման վրա առաջադրվում է էկումենիկ ասպվածաբանության Գարեգին Բ. Կաթողիկոսի հայեցակարգը բնութագրող մեկ այլ առանձնահատկություն եւս. ցանկացած եկեղեցի հսպակորեն ինքնորոշված է ինքնության եւ այլության ըմբռնման հարցում, որի դիրքերից հռչակվում է այն հավատամքը, թե իրական էկումենիզմի եւ եկեղեցիների գործակցության շենքը պետք է կառուցվի քրիստոնեական եղբայրության, Քրիստոսի Եկեղեցու միասնականության գաղափարի վրա նաեւ այն կապակցությամբ, որ միասնականության « **կոչը հարազատ է Մեր սրտին, քանզի այնտեղ տեսնում ենք Ավետարանի ոգին՝ սիրո եւ եղբայրության ամենահաղթ ոգին, որի առջեւ անզոր են եւ անուժ ամեն խոչընդոտ ու արգելք**: Քրիստոնեական Եկեղեցիների միասնությամբ ու միմյանց զորակցությամբ, հավատում ենք, որ նոր՝ երրորդ հազարամյակում առավել արգասավորվելու է ասպվածահաստատ ու առաքելաշավիղ առաքելությունը Քրիստոսի բազմանդամ Սուրբ Եկեղեցու»[11]: Շարունակելով էկումենիկ եւ միջեկեղեցական հարաբերությունների իր ըմբռնումների պարզաբանումը՝ Հայոց Հայրապետն ընդհանրացնում է. «**Մեզ համար սիրո եւ փոխօգնության այս պատրաստակամությունն է էկումենիզմի ճշմարիտ ոգին**»[12], որի գրամաբանական շարունակությունն ու օրգանական լրացումն էլ հանդիսանում է այն հավատումը, թե «Մենք հավատում ենք մեր Քույր եկեղեցիները միմյանց կապող եղբայրական սիրո զորությանը, եւ այսօր եկել ենք միասնաբար աղոթելու, որ արարչագործ, երկնապարգեւ

հատկապես Հայ եւ Կաթոլիկ եկեղեցիների պետերի համատեղ հայտարարությունը, ուր մասնավորաբար հավատվում է. «Մենք նաեւ աղոթում ենք, որ աշխարհով մեկ, ուր որ Հայոց եւ Կաթողիկե Եկեղեցու անդամները ապրում են կողք-կողքի, բոլոր ձեռնադրված սպասավորները, կրոնավորները եւ հավատացյալները «Զմիմեանց բեռն բարձէք եւ կատարեցէք զօրէնսն Քրիստոսի» (Գաղատ. Զ. 2): Նրանք փոխադարձաբար թող միմյանց զորակցեն եւ օգնեն՝ կատարելապես հարգելով յուրաքանչյուրի յուրահատուկ ինքնությունը եւ եկեղեցական ավանդությունները, խուսափելով իրար ճնշելուց. «Այսուհետեւ մինչդեռ ժամանակս ի ձեռս է, գործեսցուք զբարիս առ ամենեսեան, մանաւանդ առ ընտանիսն հաւատոց» (Գաղատ. Զ. 10)», «Էջմիածին», 2000, ԺԱ., էջ 12:

10 **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հարընդիր պաշտոնական, էջ 429:

11 «Էջմիածին», 2000, ԺԱ., էջ 8 (ընդգծումը՝Ա. Ք.): Այս համատեքստում պարզապես անհնար է չնկատել, որ Գարեգին Բ. Հայրապետի համար «իրական էկումենիզմի եւ եկեղեցիների գործակցության» հիմնախնդիրը ամենեին զուտ ասպվածաբանական-տեսական հետաքրքրություն չէ, այլ՝ **գործունեության ոգի**: Ու թեեւ այդ պնդման վկայությունները բազմաթիվ են, սակայն սահմանափակվենք հետեւյալ վկայակոչումներով: Հովհաննես-Պողոս Բ. Պապի հետ հանդիպման ժամանակ Հայոց Հայրապետը նշում է. «Փա՛ռք Բարձրյալին, որ Մենք՝ 132-րդ գահակալը Ասպվածակառույց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, երջանիկ առիթն ու պատեհությունն ունենք խաղաղության համբույր փոխանակելու Ձերդ Սրբության հետ եւ այստեղ՝ Հռոմի սրտում, մեր այս հանդիպումով հավաստելու Ս. Թադեոսի եւ Ս. Պետրոսի՝ մեր երկու Առաքելահաստատ Աթոռների եղբայրությունը» («Էջմիածին», 2000, ԺԱ., էջ 7) եւ մանրամասնելով այդ մուրեցումը՝ հռչակում է. «Եւ Մենք՝ Հայրապետ Հայոց, ուրախ ենք, որ քրիստոնեական եղբայրության, Քրիստոսի Եկեղեցու միասնականության այդ շեփորաձայնը հնչում է նաեւ Կաթոլիկ Եկեղեցու կենտրոնից՝ Վատիկանից, երա շնորհազարդ գահակալի սրտից ու հոգուց եւ չի կարող չարձագանքել ասպվածաշնչական Արարատի նայվածքի տակ գրուռող Հայաստան աշխարհում, որը դարեր շարունակ եղել է եւ այսօր էլ է՛ քրիստոնեական մշակույթի հավատարիմ ու անհոգնաբեկ սահմանապահը» (անդ, էջ 7-8):

12 **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հարընդիր պաշտոնական, էջ 431(ընդգծումը՝Ա. Ք.) :

սերը ընդգրկի մեր հավատքի ժայռի վրա հիմնված բոլոր Եկեղեցիները, եւ շաղախը դառնա նրանց միության»[13]:

Անվտախ համոզմունքի որակով հանդես եկող այդ տեսլականի դիրքերից անդրադառնալով «էկումենիզմի ճշմարիտ ոգու» մեկնաբանությանը՝ Հայրապետը շեշտադրում է փոխադարձ հարգանքի եւ հանդուրժողականության վրա հենված **երկխոսության** դերը եւ էկումենիզմի էությունը բնութագրում է որպես **միության շարժում**: Այդ պատճառով է նաեւ, որ նրա կողմից էկումենիկ հարաբերությունների էությունը բնութագրվում է որպես եկեղեցիների միջեւ առկա **ընդհանրությունների շեշտադրում**, որպես հանուն ավելի մի լավ աշխարհակարգի «**աղոթքների եւ ձայների միախառնում, ձեռք ձեռքի ագուցված համագործակցություն**)»[14]: Եւ որպես այդպիսին Վեհափառը միջեկեղեցական հարաբերությունների ոլորտում մատնանշում է Հայ եկեղեցու գործունեությունը, քանի որ «Ինչպես պատմության ընթացքում, այսօր էլ Հայ Եկեղեցուն բնորոշ է էկումենիկ ոգին, ըմբռնումն ու կեցվածքը, որը հաստատել են երանաշնորհ մեր հայրապետներն իրենց եղբայրասեր գործունեությամբ»[15]: Այդ ամենը վկայում են, որ անվերապահ մերժելով էկումենիզմի եւ եկեղեցական միության հիմնահարցը միաձեւության ոլորտում դիտարկելու անհեթեթ տեսակետը՝ Գարեգին Բ. Հայրապետն այն դիտարկում եւ արժեւորում է բացառապես որպես եկեղեցական ավանդության պահպանության դիրքերից հարաբերություն Աստծու հետ: Եւ այդ մոտեցումն ամրագրում է հետեւյալ տողերով. «Շնորհակալ ենք, Տեր, որ այսօր, նոր դարասկզբին հավատակից մեր եղբայրների հետ **էկումենիզմի դրոշի ներքո ի մի հավաքեցիր մեզ, եւ մենք միաձուլել ենք առ Աստված մեր աղոթքները**»[16]: Մեկ անգամ եւս հավաստելով էկումենիզմի եւ միջեկեղեցական գործակցության այդ ըմբռնման «ներքին կապարելությունը»՝ հավելում է. «Այս ըմբռնումով աղոթենք Հարուցյալ Փրկչին, որ զորացնի մեր մեջ փոխադարձ սիրո, եղբայրական վերաբերմունքի ոգին՝ ողջագուրվելու համար Քրիստոսի խաղաղությամբ եւ խոստովանելու հաղթական Իր Հարության մեր հավատը»[17]:

Այդ ամենին զուգընթաց Հայոց ընդհանրական Հայրապետն էկումենիզմի էությունը մեկնաբանում է որպես հարաբերություն, ավելի ստույգ՝ **սեփական ինքնության պահպանման դիրքերից հարաբերություն այլ եկեղեցիների հետ**: Այս պարա-

13 «Էջմիածին», 2000, Ժ, էջ 6:

14 Տես **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հատընտիր պաշտոնականք (1999-2009 թթ.), էջ 431(ընդգծումը՝ Ա. Ք.): Հայոց ընդհանրական Նվիրապետը քույր եկեղեցիների «ձեռք-ձեռքի ագուցված համագործակցության» գնահատելի օրինակ է համարում հայ-կաթոլիկյան եկեղեցական հարաբերությունները, ինչը կարելի է հավաստել նրա հետեւյալ պնդմամբ. «Եղբայրական Մեր սերն ու երախտագիտությունն ենք բերում բոլորիդ, մասնավորաբար՝ սիրելի Կարդինալ Քյոնիգին՝ Հայ Եկեղեցու զավակիս նկատմամբ ցուցաբերած հայրական հոգածության համար: **Քրիստոնեական Եկեղեցիների սիրով գործակցության ներարացման ուղղությամբ իմաստնազարդ Կարդինալ Քյոնիգի ջանքերը Վիեննան դարձրեցին էկումենիկ երկխոսության կենտրոն**: Շնորհիվ նրա՝ կյանքի կոչվեց այսպես «Pro Oriente» էկումենիկ կազմակերպությունը՝ արգասավոր երկխոսություն սկսելով Հին Արեւելյան Եկեղեցիների հետ (ընդգծումը՝ Ա. Ք.)», «Էջմիածին», 2001, Ժ.-ԺԱ., էջ 30:

15 **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հատընտիր պաշտոնականք, էջ 451:

16 «Էջմիածին», 2001, Ե., էջ 37:

17 «Էջմիածին», 2001, Ե., էջ 37:

գայում եւս նրա ըմբռնումների համար մեկնակետային Աստծու Կամքն է եւ աստվածաշնչական պատգամը (Յովհ. ԺԵ. 16-17): Ահա թե ինչու հիմք ընդունելով միջեկեղեցական հարաբերությունների եւ էկումենիզմի էությունը կատարելապես բնութագրող այդ պատգամը՝ նա ընդհանրացնելով հռչակում է. «**Մեր Եկեղեցու առաքելության ճանապարհին մեծապես կարեւորում ենք նաեւ էկումենիկ ոգով սերտ հարաբերությունները քույր Եկեղեցիների հետ**»[18]: Ընդ որում, նա պարզաբանում է նաեւ, որ «Իր ազգային բնույթով հանդերձ՝ Հայ Եկեղեցին ջերմ ջատագովն է քրիստոնեական Եկեղեցիների էկումենիկ համագործակցության, եւ Մենք մեր ժողովրդի հետ ուրախ ու մխիթարված ենք՝ տեսնելով, որ «Միութիւն ի կարեւորս, ազատութիւն յերկրայականս եւ սէր յամենայնի» հիմքերի վրա օրավուր զորանում է քրիստոնեական Եկեղեցիների էկումենիկ ոգին»[19]: Վեհափառ Հայրապետը մեծապես գնահատում է նաեւ Քույր եկեղեցիների կողմից իրական էկումենիզմի եւ եկեղեցական գործակցության անուրանալի դրսեւորումները եւ իբրեւ այդպիսին վկայակոչում է Հայաստանում քրիստոնեության պետականացման 1700-ամյա հոբելյանի նկատմամբ Քույր եկեղեցիների վերաբերմունքը: Համաքրիստոնեական նշանակություն ունեցող այդ իրադարձությունը որակելով «անշահախնդիր գործակցության իրական եւ ամբողջական դրսեւորում»՝ Գարեգին Բ. Կաթողիկոսը հավաստում է, որ դրանով իսկ «Մեր Եկեղեցու տոնը վերածվեց համաքրիստոնեական ուրախության, քանզի ի Քրիստոս մեկ ընտանիքի անդամներ ենք՝ նույն առաքելությամբ, քանզի «ունիմք զնոյն հոգի հաւատոց» (Բ. Կորնթ. Դ. 13)»[20]:

Հայոց Հայրապետը նաեւ պնդում է, որ «քրիստոնեական Եկեղեցիների էկումենիկ ոգին» **արմատապես մերժում է միապարրության ամեն մի ձգտում**, հետեւաբար՝ նաեւ եկեղեցիների առկա տարբերությունների վերացման ցանկացած փորձ: Անվերապահ մերժելով այդ եւ նման թյուրըմբռնումները՝ նա պարզաբանում է, որ իրական էկումենիզմը չի խաթարում եկեղեցիների ինքնությունը, չի ձգտում նրանց այլությունը վերածել զոր2 միաձեւության եւ, բնականաբար, չի հանգում նաեւ եկեղեցիների միջեւ «սոսկական համաձայնություն» ձեռք բերելուն: Նա համոզված է, որ էկումենիզմի իրական ոգին արտահայտվում է «սէր յամենայնի» բանաձեւմամբ, քանի որ «Քրիստոս սիրով է շաղախում Իր Եկեղեցու ամեն մի քարը եւ կառուցում այն՝ Սուրբ Հոգու պարգեւած սիրո միջոցով մեզ միացնելով Իրեն՝ իբրեւ Իր մարմնի անդամներ: Քրիստոս, որպես սիրո գերագույն օրինակ, միմյանց սիրել մեզ ավանդեց, Իր Եկեղեցին հիմնեց որպես երկնային սիրո

18 «Էջմիածին», 2004, Զ., էջ 8 (ընդգծումը՝Ա. Ք.) :

19 «Էջմիածին», 2001, Ժ.-ԺԱ., էջ 32: Մեծապես կարեւորելով էկումենիզմի նման ըմբռնումը՝ Վեհափառը նաեւ հավելում է, որ Հայ Եկեղեցին էկումենիզմի ոգու նկատմամբ ունեցել է եւ ունի **իր անփոփոխ ու ավանդական մոտեցումը**, որով շարունակում է առաջնորդվել նաեւ մեր օրերում, եւ որ Հայ Եկեղեցին միշտ էլ ցանկացել ու ձգտել է եղբայրական հարաբերություններ պահպանել բոլոր Եկեղեցիների հետ (տե՛ս **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հատընտիր պաշտոնականք (1999-2009 թթ.), էջ 482): Եւ ջատագովելով աստվածային սիրո վրա հենված էկումենիկ գործելակերպը՝հավելում է. «Մենք աղոթում ենք, որ Աստծո ճշմարտության հոգին, սիրո եւ արդարության հոգին աշխարհի հետ լինի, **Տերը օրհնի բարի կամքի, եղբայրության ու համագործակցության բոլոր ճանապարհները** (ընդգծումը՝ Ա. Ք.)», «Էջմիածին», 2005, Զ., էջ 17:

20 «Էջմիածին», 2001, Ժ.-ԺԱ., էջ 32-33:

հարկ երկրի վրա, որպեսզի մարդկային ցեղի որդիներս որդեգրության շնորհով այդ մեծ դան Հոր զավակները լինենք: Եվ եթե այդ ընդանիքի «մի որեւէ անդամ ցավ զգա, նրա հետ ցավ զգան բոլոր անդամները. եւ եթե մի անդամը փառավորվի, նրա հետ ուրախանան բոլոր անդամները» (Ա. Կորնթ. ԺԲ. 26)»[21]: Էկումենիզմի եւ միջեկեղեցական հարաբերությունների այդօրինակ վավերագիր պետք է համարել Հռոմի Հովհաննես-Պողոս Բ. Պապի եւ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի համատեղ հայտարարությունը, ուր մասնավորապես ասվում է. «**Կաթողիկե եւ Հայոց Եկեղեցիներն ունեն միմյանց հարգելու երկար մի փորձառություն, որպես միմյանց ամրողջացնող, քան թե հակասող նկատելով իրենց զանազան աստվածաբանական, ծիսական եւ օրինական ավանդույթները**: Մեր հաստատ բաղձանքն է միմյանց հետ փոխանակված այս բազմաթիվ կերպերը եւ միմյանց միջեւ կայացած մոտեցումները բարելավված եւ հզորացած տեսնել»[22]:

Փաստական նյութի վերլուծությունը վկայում է, որ Գարեգին Բ. Հայրապետը էկումենիկ երկխոսությունն իմաստավորում է մեկ այլ տեսանկյունից եւս, որում առաջնային է համարում «հոգեւոր գործակցությունը»: Այդ կապակցությամբ նա կոչ է անում վեր կանգնել «անպտուղ բանավեճերից», որոնք լուրջ խոչընդոտ են իրական գործակցության եւ բնականոն հարաբերությունների ծավալման գործում եւ այդ հիման վրա նման վեճերը որակում է որպես «միության ու համագործակցության ճանապարհի» անհարիր գործոններ: Այդ ըմբռնման դիրքերից նա հիմնավորում է, որ էկումենիկ գործընթացներում դավանաբանական տարբերություններն ամենեւին խոչընդոտ չեն երկխոսություն հաստատելու գործում, ինչը Վեհափառը պարզաբանում է նրանով, որ «ի Քրիստոս մեկ ընդանիքի անդամներ ենք՝ նույն առաքելությամբ, քանզի «ունիմք զնոյն հոգի հաւատոյ (Բ. Կորնթ. Դ. 13)»[23]: Նա պարզաբանում է, որ **միության շարժում լինելով՝** *էկումենիզմի հիմքում ընկած է աստվածաբանական այն համոզմունքը, որ* «**Հավատի մեր մեկությունը այն կարեւորն է, որ առանձնահատկություններով հանդերձ միավորում է մեր եկեղեցիները նույն առաքելության շուրջ**»[24]: Համոզված, որ էկումենիզմի իրական ոգին իսպառ բացառում է ցանկացած մրցակցություն՝ Հայոց Հայրապետը պնդում է, որ էկումենիզմի եւ միջեկեղեցական գործակցության հիմքում պետք է ընկած լինի **սիրո վկայությունը**, *որովհետեւ «Սիրո եւ փոխգործակցության պատրաստակամությունն է էկումենիզմի ճշմարիտ ոգին, որով գորանում է Քրիստոսի Եկեղեցու հավաքական ուժը եւ բարոյական հեղինակությունը,*

21 «Էջմիածին», 2008, Ե., էջ 23: Մեկ անգամ եւս հավաստելով էկումենիզմի եւ միջեկեղեցական հարաբերությունների նկատմամբ Հայ Եկեղեցու անփոփոխ դիրքորոշումը, Վեհափառ Հայրապետը փաստում է. «Իր ազգային բնույթով հանդերձ՝ Հայ Եկեղեցին ջերմ ջատագովն է քրիստոնեական Եկեղեցիների էկումենիկ համագործակցության, եւ Մենք մեր ժողովրդի հետ ուրախ ու մխիթարված ենք՝ տեսնելով, որ «Միութիւն ի կարեւորս, ազատութիւն յերկրայականս եւ սէր յամենայնի» հիմքերի վրա օրավուր զորանում է քրիստոնեական Եկեղեցիների էկումենիկ ոգին՝ ի խնդիր մարդկության առաջ ծառացած հիմնախնդիրների բարվոք վճռման եւ հանուն աշխարհի ապահով ու խաղաղ գալիքի». «Էջմիածին», 2001, Ժ.-ԺԱ., էջ 32:

22 «Էջմիածին», 2000, ԺԱ., էջ 11(ընդգծումը՝ Ա. Ք.):

23 «Էջմիածին», 2001, Ժ.-ԺԱ., էջ 32:

24 **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հատընտիր պաշտոնականք, էջ 449 (ընդգծումը՝ Ա. Ք.) :

որով ավելի զորավոր ու պտղաբեր պիտի լինի նաև քրիստոնեական Եկեղեցիների մեկ առաքելությունը»[25]:

Հարկ է նկատել, որ այս հարցում Վեհափառի մտքերի տրամաբանական ընթացքը միանգամայն հետևողական է ու հստակ, քանի որ պատմականորեն բազմիցս հաստատվել էր հակառակ մոտեցման հավակնությունների ու «փաստարկների» սնանկությունը: Այդ պնդումը կարելի է փաստել վերլուծաբանի հետևյալ տողերով. «**Մեր խորին համոզումն է, որ դավանական տարբերությունները Քրիստոսի ընդհանրական Եկեղեցուց ներս մեր ընդհանուր պատմության անբաժան մասն են, որ ծագել են Աստվածային հայտնության խորքերը թափանցելու ձգտումներում** *միևնույն ճշմարտությունը ուրույն լեզվամտածողությամբ արտահայտելու իրողությունից,* **սակայն երբեք խոչընդոտ չեն Եկեղեցիների հաղորդութենական իրական կապի համար: Խոչընդոտ չեն եւ չպետք է լինեն նաեւ վարչական ինքնուրույնությունն ու նվիրապետական յուրահատկությունը, որոնք, եթե միայն կամենանք, մեզ կարող են օգնել եւ ոչ՝ վնասել»**[26]: Էկումենիզմի այդ ըմբռնումը մեկ անգամ ևս փաստելով հայ հոտի և հոգևոր դասի նախանձախնդրությամբ և ջանասիրությամբ պահպանված ու անցյալից ժառանգություն ստացած «Հայ Եկեղեցու անկախությունը սրբությամբ պահպանելու» անփոփոխ դիրքորոշմամբ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հավելում է նաև, որ Հայ Եկեղեցին **ասպվածաշնորհ ազատության եւ անկախության այդ ընկալումով հարգում է քույր եկեղեցիների համար նույնքան թանկ եւ նույնքան գնահատելի ինքնությունն ու առանձնահատկությունը**[27]:

Դա է պատճառը նաև, որ Աստվածաշնչական հիմնավորմամբ Հայոց Հայրապետը իր պարտքն է համարում մեկ անգամ ևս հավաստել, որ եկեղեցու գործունեության անփոփոխ ուղենիշը «Աստվածային Սերն» է եւ որ եկեղեցին «Սուրբ Հոգու պարգևած սիրո միջոցով է ամբողջանում»: Այդ հիման վրա նա եզրակացնում է, որ էկումենիզմի եւ միջեկեղեցական հարաբերությունների էությունը կարելի է եւ պետք է արտահայտել «սիրո վրա հենված սրտակցություն» բանաձևով, որովհետև «Սրտակցության այսօրինակ սխրանքը հիմնված է սիրո վրա եւ մերժում է ամենայն հակառակություն եւ ատելություն, քանզի ամենասուրբ սերն է ընդհանրական սուրբ ընտանիքի ամուր պատվարը, Հորը, որդիներին եւ որդիներին միմյանց հետ կապող շաղախը»[28]: Գարեգին Բ. Կաթողիկոսը հավաստում է նաև, որ էկումենիզմի էությունը որպես «ասպվածային սիրո վկայություն» ըմբռնելու պարագայում «**մենք հավատացողն ենք Եկեղեցու իրական, խորհրդական միության: Հավատացողն ենք նաեւ, որ Քրիստոսի Մեկ Եկեղեցու միութ-**

25 «Էջմիածին», 2004, Զ., էջ 9: Այդ մոտեցումը պարզաբանելով աստվածաշնչական վկայությամբ Վեհափառ Հայրապետը նաև հավաստում է, որ «Միությունը, որը բոլոր Եկեղեցիների բաղձալի երազանքն է, կարող ենք ունենալ, երբ մենք միմյանց մոտենանք ... որպես եղբայրներ, եւ մեզ համար միշտ առաջնորդող լինի Պողոս Առաքյալի խոսքը (Ա. Կորնթ. ԺԳ. 13)», «Էջմիածին», 2004, Զ., էջ 21:

26 **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հարընտիր պաշտոնականք, էջ 485 (ընդգծումը՝ Ա. Ք.) :

27 Տե՛ս **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հարընտիր պաշտոնականք, էջ 485:

28 «Էջմիածին», 2008, Ե., էջ 23:

յունը հնարավոր է նախ եւ առաջ տեղական Եկեղեցիների մեջ միության վերահաստատումով *(ընդգծումը մերն է՝ Ա. Ք.)*»[29]: Եվ ընդհանրացնելով էկումենիզմի եւ միջեկեղեցական համագործակցության էությունը պարզաբանող այդ ըմբռնումները, ինչպես նաեւ ընդունելով այդ ամենի հիմքում ընկած աստվածային պատգամների անվերապահ առաջնությունը, Գարեգին Բ. Կաթողիկոսը հավաստում է. «Մենք հավատում ենք, որ քրիստոնեական Եկեղեցիների սերտացող հարաբերությունները նոր հեռանկար ու հնարավորություններ են բացելու միասնաբար գործելու՝ հանուն ամենուր խաղաղության հաստատման, հանուն ավելի մի լավ աշխարհի կառուցման»[30]:

Էկումենիզմի նկատմամբ Վեհափառի մոտեցումների էական ու բնորոշ առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ հիմնահարցի ամբողջական պատկերը ներկայացնելու միտումով նա **էկումենիկ հարաբերությունները գնահատում է աստվածաբանական երկխոսությունների համատեքստում**: Այս հարցում վերլուծաբանի հավատամքն այն է, որ անհնար է իրական էկումենիկ համագործակցություն ծավալել, եթե հարաբերվող կողմերի համար լիովին ընկալելի չեն միմյանց աստվածաբանական ու դավանաբանական տարբերությունները: Առանց այդ էական գործոնների հաշվառման, գտնում է Հայոց Կաթողիկոսը, հնարավոր չէ համակողմանի հիմնավորված եւ ներքնապես ամբողջական ու կատարյալ հարաբերությունների ծավալումը: Եւ նա արժանի գնահատումով է մոտենում հենց այդ տիպի համագործակցությանը եւ գտնում է, որ նմանօրինակ պարագա է այն, որ «Տիրոջ ամենախնամ Աջի օրհնությամբ կանգնել ենք այսօր կողք կողքի՝ վկայելու եւ զորացնելու մեր Եկեղեցիների եղբայրական սերը եւ համագործակցությունը եւ հավատարիմ Եկեղեցու Հայրերի ավանդին ու սուրբ ժառանգությանը՝ **մեր տարբերություններով եւ առանձնահատկություններով հանդերձ առավելապես կարեւորելու այն, ինչը մեզ միավորում է**»[31]: Արժեքային այդ մոտեցումը վերլուծաբանը փաստում է հատկապես Անգլիկան եւ Հայ Եկեղեցիների երկխոսության օրինակով եւ վկայում է, որ նրանք «մի շարք ոլորտներում եզակի հարաբերություններ ունեն, որոնք կարող են օրինակ հանդիսանալ մեր քույր Եկեղեցիների համար: **Ճշմարիտ է, որ մենք ոչ բոլոր հարցերում ենք համակարծիք՝ աստվածաբանական, մշակութային կամ հասարակական կյանքի, այնուամենայնիվ, մենք պետք է միշտ հիշենք, որ այն, ինչ միավորում է մեզ, ավելին է, քան այն, ինչ բաժանում է մեզ, եւ միության ոգին կարեւորն է միմյանց հետ մեր հարաբերություններում**»[32]: Այդ ամենով Ամենայն Հայոց Կաթողիկոսը էկումենիկ շարժման էությունը արժեւորում է որպես **Քրիստոսին պատկանելու զգացում** եւ այդ զգացումից բխող հոգեւոր գործակցության ու կապերի ամրապնդում: Եւ միանգամայն տրամաբանական է, որ այդ հիման վրա նա «ճշմարիտ էկումենիզմի ոգի» է համարում եղբայրական սիրո վրա կառուցված եկեղեցական այնպիսի համագործակցություն, որի առանցքը կազմում

29 **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հարգելի պաշտոնականք, էջ 485 (ընդգծումը՝ Ա. Ք.) :
30 «Էջմիածին», 2004, Զ., էջ 9:
31 «Էջմիածին», 2008, Ե., էջ 19 (ընդգծումը՝ Ա. Ք.) :
32 «Էջմիածին», 2004, Զ., էջ 21 (ընդգծումը՝ Ա. Ք.) :

է եկեղեցիները համախմբող «մեկ մարմնի անդամները լինելու հոգեւորոգ զգացումը»[33], քանի որ վստահ է, թե միայն այդ ճանապարհով «հնարավոր պիտի լինի մեկտեղված ջանքերով արդյունավորել քրիստոնեական Եկեղեցիների առաքելությունը ի հանդիման ներկա հրամայականների»[34]:

Գարեգին Բ. Կաթողիկոսի քննախույզ հայացքից չի վրիպել չափազանց կարեւոր այն պարագան, որ որոշակի սահմաններում էկումենիզմի ոգին պայմանավորված է նաեւ հասարակական գործոններով, որոնց ազդեցությամբ «Այսօր մեր ժամանակների արագընթաց զարգացումների մեջ հրապարակ են ծնունդ առնող բնապահպանական, ընկերային, տնտեսական, բարոյական բազմապիսի հարցերը, աշխարհայնացման ընթացքները, երբ նվազում է ճշմարիտ հարգանքը մարդու հանդեպ, սերը՝ Աստծո հանդեպ»[35]: Եւ քանի որ, նրա համոզմամբ, այդ հարցերում «Աստծու կամքն այլ է», նա կոչ է անում հանուն միասնության եւ համերաշխության հաստատման ապրել «խաղաղ, ստեղծագործ եւ արարումի կյանքով, Սուրբ Հոգուց մեզ տրված շնորհներով, Քրիստոսի սիրով եւ ավետարանական պատգամներով», քանի որ վստահ է, որ արդի բնական եւ հասարակական մարտահրավերները «այլընտրանք չեն թողնում եկեղեցիների համերաշխ գործակցությանը՝ ի սեր ավելի լավ աշխարհ կերտելու մեր առաքելության իրագործման»[36]: Վեհափառն այդ պարագաների առաջնությունը շեշտադրում է նաեւ այն կապակցությամբ, որ հասարակական գործոններով պայմանավորված՝ «անհանդուրժողությունն ու առճակատումները մարդկությանը շատ տառապանքներ են պատճառել»: Ահա թե ինչու բացասական այդ երեւույթներին հակադարձելով իրական քրիստոնեական ըմբռնումը՝ նա հավաստում է. «Մենք աղոթող ենք, որպեսզի Տերը միշտ սիրո մեջ պահի ազգությունները եւ Եկեղեցիները բոլոր, որպեսզի համատեղ ջանքերով օրհնյալ դարձնեն ազգերի կյանքը այս երկրի վրա: Ապահովեն խաղաղ, անվրդով կյանքի օրեր բոլոր ժողովուրդներին, որպեսզի մարդիկ ապրեն՝ իրենց ստեղծագործ աշխատանքի բարի վաստակը վայելելով եւ օրհնելով միշտ Աստծուն այն բոլոր բարիքների համար, որ Տերը պարգեւում է մեզ՝ արարածներիս»[37]: Ընդ որում, այդ գործընթացում Վեհափառը մատնանշում է ոչ միայն հասարակական, այլեւ «Քրիստոնեական Եկեղեցիների առավել համախմբված եւ ջանադիր գործակցությունը, քանզի Քրիստոսի Սուրբ Եկեղեցին ընդգրկուն համագործակցությամբ միայն ի վիճակի պիտի լինի ավելի մեծ կարողականությամբ ծառայելու աշխարհում խաղաղության հաստատմանը, մարդու եւ ազգերի, ընտանիքների, սոցիալապես խոցելի եւ անապահով խավերի իրավունքների պաշտպանությանը, ավետարանական արժեքներով կյանքի վերափոխմանը՝ ի սեր բարօր եւ երջանիկ աշխարհի կառուցման»[38]:

33 Տե՛ս «Էջմիածին», 2004, Զ., էջ 18:

34 «Էջմիածին», 2004, Ե., էջ 9:

35 «Էջմիածին», 2008, Ե., էջ 20:

36 «Էջմիածին», 2008, Ե., էջ 23:

37 «Էջմիածին», 2005, Զ., էջ 46:

38 «Էջմիածին», 2008, Ե., էջ 20: Ինչպես փաստերն են վկայում, Վեհափառը համոզված է այդ ոգով կառուցված էկումենիկ հարաբերությունների արդյունավետության մեջ: Վկայությունը ԱՄՆ-ում հայ եւ քույր

Ընդհանրացնելով այդ ամենը՝ Ամենայն Հայոց Հայրապետը փաստում է, որ Հայ Եկեղեցու համար առավել հոգեհարազատ է էկումենիզմի ըմբռնման այդ ոգին, քանի որ բացառում է հոգեւոր ու հասարակական գործոնները հակադրելու արատավոր մոտեցումները եւ, միաժամանակ, հարգանքով է մոտենում այդ հարցում Քույր եկեղեցիների ըմբռնումներին: Եւ քանի որ այդ մոտեցումը հավասարապես մերժում է նաեւ հակադիր մոտեցման անորոշ ու կասկածելի «վերլուծական հաստատությունների» առաջնության հավակնությունները, Վեհափառը հավաստում է. «Այս ըմբռնումը բխում է մեր Եկեղեցու սրբազան ավանդությունից ու մեր ժողովրդի պատմական փորձառությունից: Այս ոգով են կառուցվել մեր հարաբերությունները Քույր եկեղեցիների հետ: Մեր վկայության դաշտը էկումենիկ հարաբերություններն են, որոնք Ի. դարի երկրորդ կեսից նշանավորվեցին ձեռքբերումներով միջեկեղեցական ու միջկրոնական հարաբերություններում՝ **հիմնված միմյանց տարբերություններն ընդունելու եւ հարգելու, միմյանց ճանաչելու, եղբայրական սիրով միմյանց օժանդակելու ու նեցուկ կանգնելու սկզբունքներին**»[39]:

Համոզված, որ Տիրավանդ սիրո ուղին այսօր բարի պտուղներ է պարգեւում մեզէկումենիկ շարժման մեջ եւ բարեկամության կամուրջներ է ձգում տարբեր ազգությունների ներկայացուցիչների միջեւ, Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետը իրավահավասար այդ հարաբերությունների ծավալումը կարեւորում է նաեւ այն համատեքստում, որ «բազմաթիվ են հնարավորություններն այսօր՝ ավելի զարկ տալու փոխադարձ մեր հարաբերություններին եւ համատեղ վկայելու Մեր ժառանգած ասպվածատուր պարգեւները, ընթանալու միության տիրավանդ ճանապարհով»: Ահա թե ինչու հերթական անգամ նա հավաստում է այն իրողությունը, թե «Հրամայական է Քրիստոնեական եկեղեցիների առավել համախմբված եւ ջանադիր գործակցությունը, քանզի Քրիստոսի Սուրբ Եկեղեցին ընդգրկուն համագործակցությամբ միայն ի վիճակի պիտի լինի ավելի մեծ կարողականությամբ ծառայելու աշխարհում խաղաղության հաստատմանը, մարդու եւ ազգերի, ընտանիքների, սոցիալապես խոցելի եւ անապահով խավերի իրավունքների պաշտպանությանը, ավետարանական արժեքներով կյանքի վերափոխմանը՝ ի սեր բարօր եւ երջանիկ աշխարհի կառուցման»[40]:

Վերլուծաբանը միաժամանակ նաեւ զգուշացնում է հնարավոր բացասական հետեւանքներից, քանի որ համոզված է՝ եկեղեցական ծառայության ոլորտում հոգեւոր եւ հասարակական գործոնների հակադրությունը կամ անտեղդաշնակությունը կարող է անսուսափելիորեն հանգեցնել նորանոր շերտավորումների: Ահա այդ համատեքստում է, որ առաջնային նշանակություն է ձեռք բերում հոգեւոր եւ հասարակական գործոնն-

---

եկեղեցիների հոգեւորականների մասնակցությամբ հանդիպմանը նրա հետեւյալ խոսքերն են. «**Աղոթական հարատեւ ջանքերի եւ տքնաջան աշխատանքի արդյունքն է, որ այսօր ապրում ենք միասին անթաքույց սիրով լի Մեր եղբայրությունը: Մաքառումների եւ ամուր կամքի դրսեւորման շնորհիվ հաղթահարեցինք շատ պատնեշներ, որոնք բաժան էին հանդիսանում Եկեղեցիների, երկրների ու քաղաքակրթությունների միջեւ** (ընդգծումը՝ Ա. Ք.)», «Էջմիածին», 2007, ԺԱ., էջ 57:

39 «Էջմիածին», 2006, Զ., էջ 15 (ընդգծումը՝ Ա. Ք.):

40 «Էջմիածին», 2008, Ե., էջ 19-20:

րի միջև «ներդաշնակ համակեցություն» հաստատելու հրամայականը: Իսկ նշված գործընթացներում անուրանալի է նաև եկեղեցու դերակատարությունը, քանի որ «Քրիստոսով սիրո եւ եղբայրության մեջ չպետք է տեղ գտնեն անհանդուրժողությունն ու առճակատումները, որ մարդկությանը շատ տառապանքներ են պատճառել: Այսօր էլ անհանդուրժողությունն ու առճակատումները փորձության մեջ են պահում ապրվածային արարչագործությունը՝ մարդկանց եւ մեզ շրջապատող աշխարհը՝ միջկրոնական անհամաձայնությամբ, պատերազմներով ու ահաբեկչություններով, անտարբերության դրսեւորումներով եւ աղքատության ու տարաբնույթ աղետների հետեւանքներով: ... Այս չէ կամքն Աստծո: Այս չէ կոչումը մեր: Բոլորիս ձգտումն է խաղաղ, ստեղծագործ եւ արարումի կյանքով ապրելը՝ Սուրբ Հոգուց մեզ տրված շնորհները Քրիստոսի սիրով եւ ավետարանական պատգամներով ծառայեցնելը միասնության եւ համերաշխության հաստատման համար՝ քանզի «ովքեր սիրում են Աստծուն, ամեն ինչում գործակից են լինում բարիքի համար» (Հռոմ. Ը. 28)»[41]:

Եւս մեկ քայլ ավելին անելով Գարեգին Բ. Հայրապետը նշված գործընթացներում կարեւոր իրադարձություն է համարում նաև **փոխադարձ հարգանքի վրա խարսխված միջկրոնական հանդուրժողականության եւ համագործակցության դերը**: Ե անհնար է չնկատել, որ այդ մոտեցումն առավել արդիական հնչեղություն է ձեռք բերում կրոն-հասարակություն փոխադարձ առնչությունների զարգացման ապագայարանական մտակառույցների համատեքստում: Ահա թե ինչու այդ ամենի ընդհանրացմամբ Հայոց ընդհանրական Կաթողիկոսը պնդում է. «Միջեկեղեցական հարաբերությունները հրամայական են Մեզ համար: Հայ Եկեղեցին, հանդուրժողականության եւ համագործակցության սիրո ոգով առնելուն, **քույր Եկեղեցիների հետ գործակցելու եւ այլ կրոնների ներկայացուցիչների հետ խաղաղ համակեցության իր հինավուրց եւ հարուստ ավանդությամբ, շարունակելու է ներդրում ունենալ միջեկեղեցական եւ միջկրոնական հարաբերություններում**՝ զարկ տալով երկխոսությանն ու եղբայրությանը՝ քանզի սիրո եւ փոխադարձ հարգանքի վրա հիմնված հարաբերությունները վստահություն են ծնում, վերացնում են վախի եւ կասկածի զգացումները՝ մարդկանց մղելով հաշտության, անկեղծ եւ կառուցողական համագործակցության»[42]:

Էկումենիզմի եւ միջեկեղեցական հարաբերությունների մասին Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետի մոտեցումներն անհնար է ամբողջապես գնահատել, եթե անդրադարձ չկատարվի նաև նրա էկումենիկ գործունեությանը: Ինքնին հասկանալի է, որ հոդվածի շրջանակներում դժվար է այս հարցն ամբողջությամբ ներկայացնել: Այդ իսկ պատճառով կանդրադառնանք Հայոց Հայրապետի էկումենիկ գործունեության վաղ փուլին միայն:

Այդ տեսանկյունից արժեքային մոտեցման ելակետ կարելի է համարել Հայրապետի՝ քննարկվող շրջանը բնութագրող հետեւյալ հավատումը. «Օրհնյալ է Աստված, որ Մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Ս. Ծննդյան հոբելյանական 2000 թվականին,

41 «Էջմիածին», 2008, Ե., էջ 6-7:

42 «Էջմիածին», 2007, ԺԱ., էջ 57-58 (ընդգծումը՝ Ա. Ք.) :

որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց, Մեր գահակալության առաջին տարում **առաջնորդեց Մեր քայլերը դեպի քրիստոնեական քույր Եկեղեցիներ՝ ողջագուրումի, Մեր հոգեւոր եղբայրների հետ հաստատելու եւ զորացնելու մեր Եկեղեցիների դարավոր ամուր կապերն ու համագործակցությունն**)»[43]:

Վեհափառը նկատի ունի այն փաստը, որ դեռեւս 2000 թ. հունվարին Ս. Երկիր անդրանիկ այցելության շրջանում Երուսաղեմում եւ Բեթղեհեմում էկումենիկ հանդիպումներ է ունեցել նաեւ Սուրբ քաղաքի Քույր եկեղեցիների ներկայացուցիչների՝ հունաց Մեսրոպոլիտ Կոստանդինի եւ Սիլվեստրոս արքեպիսկոպոսի, Լատին Եկեղեցու ներկայացուցիչ Սալիմ Սայեղի եւ Վատիկանի ներկայացուցիչ Ռաուֆ Նաժժարի, ինչպես նաեւ տեղի լատին Պատրիարք Միշել արք. Սաբբահի, պապական նվիրակի, հույն կաթողիկե առաջնորդ Լութֆի Լահամի, Մարոնի արքեպիսկոպոս Պոլ Սայահի, ֆրանցիսկյան միաբանության ներկայացուցիչների, դավանակից Ղպտի Եկեղեցու առաջնորդ Անբա Աբրահամի, եթովպական Եկեղեցու առաջնորդ Անբա Գաբրիելի, ասորի Եկեղեցու առաջնորդ Մար Սեւերիոս Մելքի Մուրատ եպիսկոպոսի, մալաբար, ինչպես նաեւ՝ Ռուս եւ անգլիկան Եկեղեցիների ներկայացուցիչների հետ: Էկումենիկ հասարեռությունների շրջանակներում Վեհափառ Հայրապետը հանդիպել է նաեւ Երուսաղեմում Լութերական Եկեղեցու ներկայացուցիչներին, որոնք իրենց շնորհավորական բառի զգացումները արտահայտելուն զուգընթաց մատնանշել են նաեւ այդ հանդիպման համաքրիստոնեական նշանակությունը, հավաստել են, որ «Վեհափառի այցելությունը կարեւոր էր ոչ միայն հայ համայնքի, այլեւ բոլոր քրիստոնյաների համար»: Վեհափառն իր մասնակցությունն է բերել նաեւ քրիստոնյաների միությանը նվիրված մեկշաբաթյա աղոթքի սկիզբը խորհրդանշող Սուրբ Պողոս Տաճարի դռան բացման էկումենիկ արարողությանը: Եւ միանգամայն տրամաբանական ու օրինաչափ պետք է համարել այն, որ գնահատանքով անդրադառնալով էկումենիկ այդ շփումներին, «Վեհափառն իր այս այցելությունը հոգեւոր հարստություն համարեց ոչ միայն Սուրբ Տեղեր այցելության համար, այլեւ Քույր եկեղեցիների շփման առումով, եւ ասաց, որ ինքը Մայր Աթոռ է վերադառնում նրանց պատկերը պահած իր հոգում»[44]:

Էկումենիզմի եւ միջեկեղեցական հարաբերությունների շրջանակներում Վեհափառ Հայրապետը 2000 թ. օգոստոսին իր մասնակցությունն է բերել նաեւ Մոսկվայի Ս. Ամենափրկիչ եկեղեցու օծման արարողությանը եւ այդ հիշարժան առիթով հանուն աշխարհասփյուռ մեր ժողովրդի եւ որպես Ամենայն Հայոց Հայրապետ, Տաճարի լուսերգությամբ լեցուն կամարների ներքո ջերմորեն ողջունելով եւ շնորհավորելով Ռուս Եկեղեցու Ալեքսի Բ. Պատրիարքին, եկեղեցու բոլոր սպասավորներին եւ հանուր Ռուսիոն հավատավոր ժողովրդին հավաստել է. «Համայն հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր սերն ու օրհնությունն ենք բերել միախառնելու համաքրիստոնեական այս ուրախությանը, որի ճշմարիտ արտացոլանքն է շարականագրի խոսքը. «Ուրա՛խ լեր, Սուրբ Եկեղե-

43 «Էջմիածին», 2000, ԺԱ., էջ 13 (ընդգծումը՝ Ա. Ք.):
44 Այդ հանդիպումների մանրամասները տես «Էջմիածին», 2000, Ա., էջ 33, 49, 56-62, նաեւ՝ «Էջմիածին», 2000, Ժ., էջ 60:

ցի..., քանզի երկիրս երկինք եղեն այսօր վերստին քո նորոգմամբ»[45]: Նա միաժամանակ Քույր եկեղեցիների միջև հավասարազոր գործակցություն ծավալելու ջատագովության դիրքերից մեկ անգամ ևս հավաստել է էկումենիզմի իր ըմբռնումը. «Թող Բարձրյալն Աստված օրհնի մեր սուրբ եկեղեցիների եղբայրությունը՝ ի փառս Իր անվան, ի շինություն իրենց նոր կյանքը կերտող մեր երկու ժողովուրդների ու երկրների»[46]:

Էկումենիկ գործունեության ոլորտում ըստ էության նույն մոտեցումն է գերիշխում նաև Հայոց Հայրապետի՝ այլ եկեղեցիներ կատարած այցերի պարագայում: Այսպես, 2000 թ. հոկտեմբերին Ղպտի Եկեղեցու հրավերով ժամանելով Ալեքսանդրիա, Գարեգին Բ. Վեհափառը մեծապես կարևորում է «Եկեղեցիները միմյանց կապող եղբայրական սիրո զորությունը» և, միաժամանակ, դրացիական այդ հարաբերությունների օրինակով ցանկություն է արտահայտում, որ «արարչագործ, երկնապարգև սերը ընդգրկի մեր հավատքի ժայռի վրա հիմնված բոլոր եկեղեցիները և շաղախը դառնա նրանց միության»[47]: Այդ նույն նպատակին է միտված նաև Քույր եկեղեցու երկու հայրապետերի ստորագրած համատեղ կոմյունիկեն, որտեղ մասնավորապես շեշտվում է. «Մենք պարտավորվում ենք ավելի տեսանելի ու շոշափելի դարձնել Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների ընտանիքին պատկանող մեր երկու Եկեղեցիների տեղական, շրջանային և համաշխարհային մակարդակներով Էկումենիկ շարժման մեջ սերտ համագործակցումը»[48]: Եվ ամենևին չսահմանափակվելով այդքանով ու իր էկումենիկ համոզմունքները կյանքի կոչելու միտումով՝ այցի շրջանակներում Վեհափառ Հայրապետը հանդիպել է նաև Ալեքսանդրիայի Հույն Ուղղափառ Եկեղեցու Պետրոս Է Պատրիարքին, Ս. Մարկոս եկեղեցում համատեղ աղոթել են Հայ և Հույն եկեղեցիների հավատացյալների, ինչպես նաև տարածաշրջանի խաղաղության հաստատման և ամրապնդման համար: Հայոց Վեհափառ Հայրապետը նաև գոհություն է հայտնել Աստծուն այն կապակցությամբ, որ իր գահակալության առաջին տարում ոչ միայն հնարավորություն է ընձեռել եղբայրական այցելությամբ հանդիպելու Քույր եկեղեցիների պետերին և իր հարգանքը մատուցելու նրանց, այլև տնօրինել է **ամրապնդել միջեկեղեցական այն կապերը**, որոնք հաստատել էին դեռևս իր երջանկահիշատակ նախորդները[49]:

«Ի Քրիստոս էկումենիկ միություն հաստատելու» համատեքստում պետք է դիտարկել նաև նույն ամսին Եթովպիայի Թեւահեդո Եկեղեցի կատարած Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը: Գնահատանքով արձանագրելով Քույր եկեղեցիների դրացիական հարաբերությունները, Հայրապետը Աղիս Աբեբան համարում է Հայ և Եթովպիական «Եկեղեցիների էկումենիկ ոգու արտահայտության կարևոր կենտրոն» և միաժամանակ հավաստում է, որ Եթովպիա է ժամանել եկեղեցիների միջև հաստատված այդ «բարի» հարաբերությունները ծավալելու «ոգով և վճռականությամբ»: Մանրամասնելով այդ դիրքորոշումը Գարեգին Բ. Կաթողիկոսը պարզաբանում է, որ եկե-

45 «Էջմիածին», 2000, Ժ., էջ 4:
46 Տե՛ս **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հատընտիր պաշտոնականք, էջ 465:
47 Տե՛ս անդ, էջ 454:
48 «Էջմիածին», 2000, Ժ., էջ 15-16:
49 Տե՛ս «Էջմիածին», 2000, Ժ., էջ 10:

ղեցիների միջեւ իրական էկումենիկ ոգի արմատավորելն հրատապ եւ անհրաժեշտ է ինչպես այն կապակցությամբ, որ «21-րդ դարը հոգեւոր արժեքների առավել զորացման ու ծաղկման, ողջ աշխարհում հոգեւոր կյանքի զարկ տալու շրջան է», այնպես էլ այն հրամայականով, որ այդ գործընթացում «պարտք կա մեզ վրա, Հին Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների վրա, որ առավել զորացնեն եւ սերտացնեն իրենց համագործակցությունը»[50]:

Իրական էկումենիզմի մեկ այլ ցայտուն դրսեւորում է նույն թվականի նոյեմբերին Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Հռոմի Հովհաննես-Պողոս Բ. Պապի հանդիպումը: Արժանին մատուցելով Հայ եկեղեցու ազգային եւ համաքրիստոնեական դերի, ընդհանրական քրիստոնեական ընտանիքում Հայ եկեղեցու առաքելության, մշակութային գործունեության եւ այլ հարցերում Պապի եւ նրա ղեկավարած Կաթոլիկ եկեղեցու դիրքորոշմանը՝ Գարեգին Բ. Վեհափառն իր երախտիքի խոսքում նշում է. «Զերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս. հանուն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Մեր շնորհակալությունն ենք հայտնում սիրո ու հարգանքի այս խոսուն վկայության համար, որը նաեւ բարձրագույն գնահատականն է Հայ Եկեղեցուն, նրա ժառանգությանը, նահատակություններով կերտված նրա պատմությանը»[51]:

Քրիստոնեական աշխարհում Հայ Եկեղեցու դերի, ինչպես նաեւ Վեհափառ Հայրապետի էկումենիկ գործունեության արժանահիշատակ իրողությունների շարքում պետք է նշել նաեւ 2001 թ. *փետրվարին Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կենտրոնատեղի կատարած Վեհափառի անդրանիկ պաշտոնական այցը: ԵՀԽ պաշտոնական հյուրը լինելով, Հայոց Հայրապետը հանդիպումներ է ունեցել ինչպես ԵՀԽ գլխավոր քարտուղար Կոնրադ Ռայզերի, ԵՀԽ ընդհանուր քարտուղարության, այնպես էլ ԵՀԽ-ում Ուղղափառ եկեղեցիների ներկայացուցիչների հետ: Իրական էկումենիզմի դերի եւ նշանակության շեշտադրությամբ Հայոց ընդհանրական Հայրապետը կարեւորել է հատկապես ԵՀԽ-ի կողմից Հայաստանում իրականացվող ընկերային եւ բարեսիրական ծրագրերը: Էկումենիզմի համահունչ ոգեշնչումների ծիրում պետք է դիտարկել նաեւ մեկ ամիս անց Մայր Աթոռ Ս. Էջմիածնում աշխատանքն սկսած ԵՀԽ Հայաստանյան Կլոր սեղանի ղեկավարների տարեկան ժողովից առաջ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից մասնակիցների ընդունելությունը եւ հանդիպման ժամանակ Վեհափառի գնահատանքի խոսքը, որով մատնանշվեց միջազգային եկեղեցական կազմակերպության՝ Հայաստանում տարիներ շարունակ իրականացրած կրթական, վարկային, գյուղատնտեսական եւ այլ ծրագրերի իրականացումը: Այդ գործընթացում Հայրապետը կարեւորեց նաեւ միջեկեղեցական հարաբերությունների անհրաժեշտությունը: Այդ համատեքստում Հայոց հոգեւոր առաջնորդը մեծ գոհունակությամբ փաստեց հատկապես միջեկեղեցական հարաբերությունների եւ գործակցության ծավալման ցուցիչ այն*

50 **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հարընդարձ պաշտոնական, էջ 457-458:

51 «Էջմիածին», 2000, ԺԱ., էջ 8:

իրողությունը, որ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարություններին անմասն չեն Քույր եկեղեցիների ներկայացուցիչները[52]:

Էկումենիկ եւ միջեկեղեցական բնականոն հարաբերությունների համատեքստում պետք է դիտարկել նաեւ 2001 թ. մարտի 1-ին Լոնդոնի Բրիտանական գրադարանում Հայ Եկեղեցու 1700-ամյակին նվիրված «Գանձերը՝ տապանից» ցուցահանդեսի բացմանը Վեհափառ Հայրապետի մասնակցության փաստը: Ինչպես այս այցը լուսաբանող լրատվամիջոցներն են վկայում, Կաթողիկոսն իր հեղինակությամբ ոչ միայն արեւմտյան այցելուների մոտ մեծ հետաքրքրություն առաջացրեց հայ եկեղեցական արվեստի նմուշների եւ հայ քրիստոնեական մշակույթի համամարդկային արժեքների նկատմամբ[53], այլեւ նոր քայլ կատարեց Արեւելյան եւ Արեւմտյան եկեղեցիների միջեւ համագործակցության նոր հորիզոններ հասպարելու գործում:

Նույն միտումն է գերիշխում նաեւ 1700-ամյակի հոբելյանական տոնակատարությունների առթիվ Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանած Քույր եկեղեցիների պետերին ուղղված Վեհափառ Հայրապետի խոսքում, որտեղ մասնավորապես հավաստվում է, թե քույր եկեղեցիների առաջնորդների ներկայությունը կոչված է 1700-ամյակի ոգեկոչմանն «առավել հանդիսավորություն հաղորդելու եւ այն իր համաքրիստոնեական տարողության մեջ արժանվույնս պանծացնելու»: Եւ մատնանշելով միջեկեղեցական համագործակցության ոլորտում նախկինում իր համարժեքը չունեցող այս իրողությունը՝ Գարեգին Բ. Վեհափառը մեկ անգամ ևս հավաստում է, որ «Մեզ համար սիրո եւ փոխօգնության այս պատրաստակամությունն է էկումենիզմի ճշմարիտ ոգին, որի ականատեսը դարձանք Մեր այցերի ընթացքին, երբ եղանք Տերունական երկրում, Ռուսաստանում, Ռումինիայում, Եգիպտոսում, Եթովպիայում, Վրաստանում, Վատիկանում՝ ամենուր վայելելով հոգեւոր մեր եղբայրների անկեղծ սերն ու հարգանքը: Զգացինք Եկեղեցու հավաքական ուժը, բարոյական հսկայական հեղինակությունը եւ ցանկացած խոչընդոտ հաղթահարելու նրա ներունակությունը: Վստահ ենք, որ փոխայցելությունների ու շփումների շարունակականությունը նոր ու խոստումնալից հեռանկար է բացելու մեր առջեւ, որպեսզի մենք՝ իբրեւ Եկեղեցիներ, **մեր ընդհանրությունների շեշտադրման ճանապարհով ընդառաջ ելնենք ժամանակի մարտահրավերներին**: Մենք կարող ենք, որպես քրիստոնյա Եկեղեցիների առաջնորդներ, մեր աղոթքների ու ձայների միախառնմամբ, ձեռք-ձեռքի ագուցմամբ միասին գործել՝ հանուն ավելի մի լավ աշխարհի ստեղծման»[54]:

---

52 Տե՛ս «Էջմիածին», 2001, Բ.-Գ., էջ 23:

53 Մանրամասները տե՛ս «Էջմիածին», 2001, Բ.-Գ., էջ 14-15: Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու հոբելյանական միջոցառումների շարքում Վեհափառ Հայրապետը արժանին է մատուցում նաեւ «ֆինն ժողովրդի հյուրընկալ ոգուն» եւ հավաստում է. «Մենք խորապես զգացված ենք ֆինն ժողովրդի հյուրընկալ ոգուց, որը հնարավոր դարձրեց Հելսինկիում կազմակերպել «Հայ Եկեղեցու գանձերը» խորագրով ցուցահանդես՝ նվիրված Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակին», **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հատընտիր պաշտոնականք, էջ 451:

54 Տե՛ս **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հատընտիր պաշտոնականք, էջ 431(ընդգծումը՝ Ա. Ք.) :

Եւ համոզված, որ էկումենիզմի եւ միջեկեղեցական հարաբերությունների ոլորտում Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի համախումբ ոգեկոչման իրադարձությունը իմաստավորված է առ Աստված հավատով, քրիստոսասեր ընթացքով եւ եղբայրասեր գործելակերպի վկայությամբ, Հայոց Հայրապետը հռչակում է. «Այսօր առավել բերկրաշատ ենք եւ լեցուն միխիթարությամբ, քանզի աղոթաբույր այս Տաճարի կամարների ներքո, որպես մեկ ընտանիք, հավաքվել ենք քրիստոնեական եկեղեցիների անդամներս՝ միասնաբար ոգեկոչելու հիշատակը հայոց համազգային մկրտության, հավաքվել ենք միասնաբար աղոթելու առ Աստված՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյա հոբելյանի առիթով»[55]: Այդ նույն շարժառիթներով նա միաժամանակ երախտիքի խոսք է հղում առ Աստված. «Շնորհակալ ենք, Տեր, որ այսօր, նոր դարասկզբին հավատակից մեր եղբայրների հետ էկումենիզմի դրոշի ներքո ի մի հավաքեցիր մեզ, եւ մենք միաձուլել ենք առ Աստված մեր աղոթքները: **Էկումենիզմի ոգին միշտ հարազատ է եղել Հայ Եկեղեցուն** եւ իր դասական ձեւակերպումը գտել մեր Եկեղեցու մեծագործ կաթողիկոսներից Ներսես Շնորհալու կողմից դեռեւս ԺԲ.դարում. «Միութիւն ի կարեւորս, ազատութիւն ի երկրաբաականս, սէր յամենայնի»: **Այս ըմբռնումով աղոթենք Հարուցյալ Փրկչին, որ զորացնի մեր մեջ փոխադարձ սիրո, եղբայրական վերաբերմունքի ոգին՝ ողջագուրվելու համար Քրիստոսի խաղաղությամբ եւ խոստովանելու հաղթական Իր Հարության մեր հավատը**»[56]:

Համեմատելով դժվար չէ նկատել, որ էկումենիզմի եւ միջեկեղեցական հարաբերությունների էության ըմբռնման եւ էկումենիկ գործակցություն ծավալելու շրջանակներում Գարեգին Բ.. Ամենայն Հայոց Կաթողիկոսը համահունչ դիրքերից է հանդես գալիս նաեւ Միածնաէջ Մայր Տաճարում Կ. Պոլսի Բարդուղիմեոս Բ Պատրիարքի, Անտիոքի եւ Համայն Արեւելքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Իգնատիոս Զաքքա Ա. Իվաս Պատրիարքի, Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Շենուդա Գ. Պատրիարքի, Վրաց Ուղղափառ Եկեղեցու Իլիա Բ. Պատրիարքի, Հռոմի Սրբազան Քահանայապետ Հովհաննես-Պողոս Բ. Պապի, Ֆինլանդիայի ավետարանական-լյութերական Եկեղեցու պետ, Տուրկուի եւ համայն Ֆինլանդիայի Ջուկկա Պաարմա արքեպիսկոպոսի եւ Քույր եկեղեցիների եւ այլ կրոնապետներին հղված Հայրապետական խոսքերում[57]:

Այդ համատեքստում թերեւս տիպական պետք է համարել Հռոմի Հովհաննես-Պողոս Բ Պապին ուղղված Գարեգին Բ. Կաթողիկոսի խոսքը, որտեղ Հայոց Հայրապետը մեկ անգամ եւս հավաստում է, որ Ս. Պատարագի համատեղ արարողությամբ դեպի երկինք բարձրացող «Քրիստոսի Մեկ եւ բազմանդամ ընտանիքի զավակների աղոթքները» վկայությունն են ինչպես մեր ժողովրդի ուրախությանը «կաթոլիկ մեր եղբայրների եւ քույրերի խնդակից լինելու», այնպես էլ «մեր եկեղեցիների եղբայրական սիրո, բարի հա-

55 «Էջմիածին», 2001, Ե., էջ 38:

56 «Էջմիածին», 2001, Ե., էջ 37:

57 Մանրամասները տե՛ս **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հատընտիր պաշտոնականք, էջ 435-452:

բաբերությունների»: Մեկ անգամ եւս շեշտելով Քույր եկեղեցիների ավանդական ըմբռնումների եւ այլության փոխադարձ հարգանքի հրամայականը, հավասարապես նաեւ հավաստելով իրական էկումենիզմի եւ միջեկեղեցական համագործակցության հրամայականը՝ հավաստում է. «Հավատի մեր մեկությունը այն կարեւորն է, որ առանձնահատկություններով հանդերձ միավորում է մեր Եկեղեցիները նույն առաքելության շուրջ եւ կոչում՝ գործել սիրով միաբան ու միասնաբար»[58]: Վեհափառն իր պարտքն է համարում այդ համատեքստում մեկ անգամ եւս պարզաբանել էկումենիզմի եւ միջեկեղեցական հարաբերությունների անբաժան տարրը հանդիսացող Եկեղեցու մեկության եւ այլության իր ըմբռնումը: «Փառք ենք բարձրացնում առ Աստված, - այդ կապակցությամբ հավաստում է Հայոց Հայրապետը, - որ օրավուր նոր քայլեր է անում քրիստոնեական եկեղեցիների էկումենիկ համագործակցությունը՝ զորացնելու համար փոխհակացողության եւ համերաշխության ոգին Քրիստոսի Ընդհանրական Եկեղեցուց ներս: Այս Աստվածահաճո նպատակին են ուղղված նաեւ Ձերդ Սրբության անդուլ ջանքերն ու անհոգնաբեկ այցելությունները»[59]:

Եւ որպես այդ ամենի տրամաբանական եւ օրինաչափ ընդհանրացում՝ անհրաժեշտ ենք համարում վկայակոչել նաեւ էկումենիզմի եւ միջեկեղեցական հարաբերությունների նկատմամբ Հայ Եկեղեցու վերաբերմունքն ընդհանրացնող Վեհափառ Հայրապետի հետեւյալ հավաստումը. «**Մենք փոքր ազգ ենք, սակայն եկեղեցական հարաբերություններում մեր կեցվածքը բնորոշ է զորավոր եկեղեցիներին եւ զորավոր ազգերին: Փոքր ազգերին բնորոշ է ամփոփված մնալը՝ պահելու համար իրենց արժեքները, իրենց ավանդությունները եւ պաշտպանելու իրենք իրենց, որից սակայն չեն վախենում ո՛չ մեր Եկեղեցին եւ ո՛չ էլ մեր ազգը: Մեր կյանքն ու գործունեությունը բնորոշ է մեծ եւ զորավոր ուժեր ունեցող ազգերին: Այդ ուժը մենք ստանում ենք Տիրոջից, Նրա հանդեպ ունեցած մեր հավատից: Չենք կարող մեր ճանապարհը շարունակել, եթե այն Աստծո կամքը չլինի**»[60]:

58 **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հատընտիր պաշտոնականք, էջ 449:
59Անդ:
60 «Էջմիածին», 2007., ԺԱ, էջ 54-55 (ընդգծումը՝ Ա. Ք.) :